# ԿԱՆԱՆՑ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*Սկիզբը՝ թիվ 1-4*

Ինչպես որ արդեն իսկ անդրադարձել ենք, նշանակը մարմնավորում է իրականությունը, եւ քահանայության պարագայում իրականությունն Ինքը՝ Քրիստոսն է, եւ եպիսկոպոսը կամ քահանան՝ խորհրդական (սակրամենտալ) պատկերը Քրիստոսի եւ որպես այդպիսին՝ իրականության գործնական եւ կենդանի ներկայությունը: Քահանան՝ որպես Քրիստոսի պատկեր, Բանի եւ խորհրդի ծառայության մեջ Քրիստոսի հայտնությունն ու ներկայացնողն է եւ այսպիսով՝ գործիք-միջոցը Անտեսանելիի, իսկ ծիսակատար քահանան Նա է, Ով իրագործում է Հաղորդության խորհուրդը՝ Ինքը՝ Հիսուս Քրիստոսը, եւ ներկայացնում է Քրիստոսին՝ եկեղեցու հետ հարաբերության մեջ՝ որպես Քրիստոս Փրկիչ, Քրիստոս մեզ համար: (*«...Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ՝ մաղթեմ, մի դարձուցաներ զերեսս քո յինէն եւ մի մերժեր զիս ի ծառայից քոց. այլ արժանի արա մատուցանել քեզ զընծայս զայս յինէն ի մեղուցեալ եւ յանարժան ծառայէս քումմէ: Վասն զի դու ես, որ մատուցանես եւ մատչիս եւ ընդունիս եւ տաս Քրիստոս Աստուած մեր» («Խորհրդատետր Սրբոյ Պատարագի՝ ըստ ծիսի Առաքելական Սուրբ եկեղեցւոյ Հայաստանեայց», Վաղարշապատ, 1880 թ., էջ 11)*: Եկեղեցին օրգանական միության մեջ մշտապես ընկալվել է որպես «Քրիստոսի Հարսը»: Միություն, ուր անդամները, ներառյալ նաեւ բոլոր կանանց, մկրտված են, ովքեր «կյանքի շնորհի ժառանգորդներն են» (Ա Պետ. Գ 7), մինչդեռ կարող են տարբեր շնորհներ ունենալ, սակայն բոլորը հավասար են՝ լինելով «Քրիստոսի Հավիտենական Մարմնի» անդամները՝ որպես Ամուսնու եւ Կնոջ խորհրդական (սակրամենտալ) միություն. «Սա մեծ խորհուրդ է. բայց ես սա ասում եմ Քրիստոսի եւ եկեղեցու վերաբերյալ» (Եփես. Ե 32): Այս փոխաբերությունը մատնանշում է այն փաստը, որ «տղամարդը եւ կինը միասին են պատկանում եկեղեցուն՝ Հարսին, եւ կոչված են ամուսնության-համաձայնական պատասխան տալու Քրիստոսի ամուսնական-համաձայնական սիրուն... Քրիստոսի սերը «տղամարդկային սեր է», իսկ եկեղեցու պատասխանը՝ «կանացի սեր»: Հարս-եկեղեցին համայնքն է, որում կինը եւ տղամարդը միանմանաբար են ընդունում եւ փոխադարձում Քրիստոսի սերը, սակայն Քրիստոսն է միակ Փեսան եւ ոչ այլ ոք: *(Բանականորեն եւ տրամաբանորեն սա արտահայտությունն է արարչագործության բնական կարգավորության, որը ցավալիորեն «լղոզված» եւ շփոթված է միասեռականների իրավունքի պաշտպանության շարժման մեջ: Այս առումով, եթե մենք ընդունում եւ հետեւում ենք սուրբգրային եւ ավանդական սիմվոլիզմին, «ամուսնական իրավունքի ամբողջության» նկարագրին եւ բնությանը, ապա կին քահանաների ձեռնադրությունը սիմվոլիկ կերպով կհաստատի, մեղմ ասած, միասեռ անպտուղ հարաբերություն կին Փեսայի եւ Հարսի կամ երկու Հարսների միջեւ):*

### ՍՐԲԱԶԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Եկեղեցու կյանքը բացարձակապես հիմնված է Սուրբ Գրքի վրա, որը վճռորոշ ենթահող է եկեղեցու Սրբազան Ավանդության համար: Թեեւ Սրբազան Ավանդությունը բխում է Սուրբ Գրքից, այդուհանդերձ այն չի կարելի ընթերցել ավանդությունից անկախաբար: Ավանդությունը եկեղեցու կյանքն է Սուրբ Հոգով, քանզի Սուրբ Հոգին է առաջնորդում «ամենայն ճշմարտությամբ» (Հովհ. ԺԶ 13) եւ խնամում նրան՝ եկեղեցուն՝ հաստատելու եւ պահպանելու այն ճշմարտությունը, որ փոխանցված է Քրիստոսի մտքից եւ առաքյալներից: Լինելով Սրբազան Ավանդության կորիզը՝ Սուրբ Գիրքն ապրվել եւ մեկնաբանվել է եկեղեցու հայրերի կողմից՝ նրանց կյանքի եւ գործերի միջոցով, եկեղեցու ծիսական եւ պաշտամունքային կյանքի միջոցով՝ հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի, եւ եղել է գերագույն ճանապարհացույցը, ընկալումն ու նկարագիրը՝ առաքյալներին հետեւելու համար (Բ Թես. Գ 6-7): Անշուշտ, անհնար է բացառել, որ ավանդությունն ազդվել է նաեւ ժամանակի պատմաքաղաքական իրականություններից... Եկեղեցու կյանքը կարող է կոչվել նոր ձեւերի, սակայն սա երկար չի կարող գոյություն ունենալ, եթե այն ավանդա՛կան արմատներ չունի, քանզի մեր զգացումներով եւ գաղափարներով մենք ապրում ենք կյանքի ժառանգականության ռիթմի մեջ՝ ունենալով մեր պատկանելությունն անցած ճանապարհի հստակ հիշողությանը: Այսպիսով՝ քահանայական ձեռնադրության վերաբերյալ եկեղեցու ավանդությունը թելադրում է, որ եկեղեցու հիմնադրության առաջին իսկ օրվանից այն որդեգրել է հետեւյալ ընկալումը:

Նախ՝ տղամարդն աշխարհի համար քահանա է, նա, ով աշխարհը մատուցում է Աստծուն օրհներգության եւ սիրո զոհաբերության մեջ եւ իր հավիտենական Հաղորդության խորհրդի միջոցով աստվածային սերն իջեցնում աշխարհի վրա: Քահանայությունը... բնությունն է «արու-ության»՝ Արարչի, իսկ «էգ-ությունը»՝ արարված աշխարհի: Հետեւաբար՝ սա երկու տարբեր սկզբունքների արարչագործ հարաբերություն է՝ քահանայության եւ արարվածի, Արարչի եւ արարչագործության միջեւ: Ապա՝ Քրիստոսը եւ առաքյալները, այնուհետեւ վաղ եկեղեցու սպասավորները եւ նրանց հաջորդները՝ եպիսկոպոսներն ու քահանաները, դարեր շարունակ՝ պատմականորեն եղել են տղամարդիկ եւ ոչ՝ կանայք: Ուղղակի խոսելով՝ աստվածաբանությունը, փիլիսոփայությունը եւ քննարկումները պետք է ամբողջացում գտնեն այս կետում եւ դիտարկվեն ու վերլուծվեն՝ պատմական այս իրողությունից բխած լինելով:

▼▼▼

Այսօր, ցավալիորեն, կանանց ձեռնադրության խնդիրն արդեն իսկ գրանցված իրականություն է, հատկապես՝ Անգլիկան եկեղեցում: Հստակ է նաեւ, որ այսօր քրիստոնեությունը կարիք ունի դիմագրավելու երեւելի կամ աներեւույթ մեկ այլ մարտահրավերի՝ ամերիկյան քրիստոնեությանը՝ բոլոր առումներով (արվեստ, բարոյականություն, ընտանեկան եւ հասարակական կյանք եւ այլն): Եվ եկեղեցին, թեեւ աստիճանական տեղատվությամբ, ճգնում է չխոնարհվել զանգվածային ուրացումների եւ հերետիկոսությունների առջեւ, որոնք բազմանուն ներկայություն են մեր երկրում եւս: Մեր շոշափած խնդիրը պարզապես մի հատվածն է այս հսկա պատկերի եւ կենսական նշանակություն ունի եկեղեցու կյանքի համար: Այն, արձանագրված փաստ լինելով հանդերձ, ցայսօր էլ բաժանման պատճառ է թե՛ Ընդհանրական եկեղեցու եւ թե՛ այս խնդրի «ջատագով» առաջամարտիկ Անգլիկան եկեղեցու ներսում: Այսուհանդերձ, եթե մեր ամենօրյա պաշտամունքային կյանքում, անընդհատ կրկնելով, հռչակում ենք, թե «Հավատում ենք Մի, Սուրբ, Առաքելական, Ընդհանրական եկեղեցուն», խնդիրը հարկ է եւ անհրաժեշտ լուծել տիեզերական եկեղեցում, այլապես պետք է թաղել եւ մոռանալ Քրիստոսի հիմնադրածը եւ հավատալ մի նոր հաստատության:

*Տ. Բագրատ վրդ. ԳԱԼՍՏՅԱՆ*
*Սեւանի Վազգենյան հոգեւոր ճեմարանի տեսուչ*

# 23 մարտի
# ՂԱԶԱՐՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*«Ես իսկ եմ հարություն ու կյանք. ով հավատում է ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի եւ ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի»:*
*Հովհ. 11:25-26*

Ծաղկազարդին նախորդող շաբաթ օրը Հայ Առաքելական Ս. եկեղեցում հիշատակվում է Ս. Ղազարոսի հարությունը, որն ավետարանական ծագում ունի:

Երուսաղեմից քիչ հեռու գտնվող Բեթանիա գյուղում ապրում էին Ղազարոսն ու իր քույրերը՝ Մարթան (որը յուղով օծեց Տրոջն ու իր մազով սրբեց Նրա ոտքերը) եւ Մարիամը, որոնց Հիսուսը սիրում էր: Հովհաննես ավետարանիչը հետեւյալն է պատմում Ղազարոսի հիվանդանալու մասին: Երբ նա հիվանդացավ, իր քույրերը մարդ ուղարկեցին Հիսուսի մոտ՝ ասելով. «Տե՛ր, ահավասիկ նա, ում դու սիրում էիր, հիվանդացել է» (Հովհ. 11:3): Բանբերն ակնկալում էր, որ Ղազարոսի հանդեպ տածած սերը նրան պիտի շտապեցներ Բեթանիա, սակայն աստվածային պատասխանը հետեւյալը եղավ. «Այդ հիվանդությունը մահաբեր չէ, այլ Աստծո փառքի համար է, որպեսզի դրանով Աստծո Որդին փառավորվի» (Հովհ. 11:4): Երկու օր անց



միայն Հիսուսն աշակերտներին ասաց, որ կրկին Հրեաստան պիտի գնան, սակայն վերջիններս սաստիկ շփոթվեցին, քանի որ վերջին անգամ, երբ այնտեղ էին, քարկոծումից հազիվ ազատվեցին: Եվ այժմ նորից իրենց կյանքը պիտի վտանգե՞ն: Հիսուսը, տեսնելով նրանց վախը, ասաց. «Ցերեկը տասներկու ժամ չունի՞, եթե մեկը ցերեկով է քայլում, չի սայթաքում, որովհետեւ այս աշխարհի լույսը տեսնում է, իսկ եթե մեկը գիշերով է քայլում, սայթաքում է» (Հովհ. 11:9-10):

Արդարեւ, գիշերով քայլողը կսայթաքի, եթե իր հետ լույս չունենա, իսկ աշակերտներն ամեն ժամ իրենց հետ ունեին Փրկչին, Որը Լույս էր, ինչպես կասեր Սիմեոն ծերունին, որ եղավ հայտնություն հեթանոսների համար: (Ղուկ. 2:32):

Անշուշտ, «Լույս», քանզի ով Նրա հետեւից է գնում, «խավարի միջով չի քայլի» (Հովհ. 8:12): Սակայն ինչպես շատ անգամ, այս անգամ եւս աշակերտները չհասկացան՝ ինչի մասին է ասում Վարդապետը: Չհասկացան նաեւ այն, որ Հիսուսն ասաց. «Մեր բարեկամ Ղազարոսը ննջել է, սակայն ես գնում եմ, որ նրան արթնացնեմ» (Հովհ. 11:11): Ուստի Նա բացահայտ հայտարարեց. «Ղազարոսը մեռավ. բայց ես ուրախ եմ ձեզ համար, որ այնտեղ չէի. որպեսզի դուք ինձ հավատաք: Արդ, եկե՛ք գնանք Նրա մոտ» (Հովհ. 11:14-15):

Երբ Բեթանիա հասան, տեսան, որ մեծ բազմություն է հավաքվել Ղազարոսի տանը: Մարդիկ եկել էին մխիթարելու նրա քույրերին՝ Մարիամին ու Մարթային: Վերջինս իմանալով, որ Հիսուսը եկել է, ընդառաջ գնալով՝ ասաց. «Տե՛ր, եթե Դու այստեղ լինեիր, իմ եղբայրը մեռած չէր լինի, բայց հիմա էլ գիտեմ, թե ինչ խնդրես Աստծուց, քեզ կտրվի» (Հովհ. 11:21-22): Մարթան հավատում էր Հիսուսի Աստված լինելուն եւ մեծ հույս ուներ, որ Նա կբժշկի: Քրիստոսը շատ հստակ պատասխանեց. «Քո եղբայրը հարություն կառնի» (Հովհ. 11:23): Սակայն Մարթան, իր մտապատկերում ունենալով վերջին օրվա հարությունը, մտածում է, թե Փրկիչը դա է ակնարկում: Հիսուսը նրան ասաց. «Ես իսկ եմ հարություն եւ կյանք. ով հավատում է ինձ, թեպետ եւ մեռնի, կա՛պրի»: Վիմափոր գերեզմանին հասնելով՝ դռնաքարը Հիսուսի հրամանով մի կողմ են գլորում: Ներկաներն անհանգստանում են, թե մարմինն արդեն նեխած կլինի: «Եթե հավատաք, կտեսնեք Աստծո փառքը»,- ասաց Հիսուսը եւ ձեռքերը վեր բարձրացնելով՝ գոհություն հայտնեց Հորը եւ աղաղակեց,- Ղազարո՛ս, վե՛ր կաց, արի՛»: Եվ Ղազարոսը կենդանի կանգնում է նրանց առջեւ, ինչպես որ էր, երեսն ու մարմինը պատանքներով փաթաթած:

Այս երեւույթը մի պահ քարացնում է ամենքին, ոչ ոք չի համարձակվում մոտենալ Ղազարոսին, համատարած սարսափ է պատում բոլորին: Իսկ Հիսուսն աներկյուղ, պարզ ու հասարակ հրամայում է. «Արձակեցե՛ք ու թողե՛ք, որ գա» (Հովհ. 11:44): Սա է Ղազարոսի հարության համառոտ պատմությունը: Թերահավատները կարող են կասկածել, թե ինչպես մարդը, չորս օր մնալով գերեզմանի մեջ, ողջ-առողջ դուրս եկավ: Սակայն հիշենք այն խոսքը, որ շատ տեղին պիտի լինի այստեղ. «Աստծու համար անկարելի ոչինչ չկա»: Ավետարանը Ղազարոսի կյանքի հետագա ընթացքի մասին լռում է: Ըստ ավանդության՝ նա իր քույրերի հետ անցել է Կիպրոս եւ այստեղ էլ վախճանվել: Մի ուրիշ ավանդության համաձայն՝ նրանք վախճանվել են Մարսիլիայում: Սակայն սրանք ոչ մի էական նշանակություն չունեն: Կարեւորն այն է, որ եւս մեկ անգամ հաստատվեց Քրիստոսի՝ Աստծու Որդի լինելը:

Եվ այսօր էլ Նա կանգնած է մեր հոգու վիմափոր ու մռայլ գերեզմանի մոտ՝ Իր բարի ու սիրառատ հայացքով քարացնելով եւ սարսափեցնելով այնտեղ հավաքված մեղքերի ու դեւերի բազմությանը: Նա՝ ամենահաղթ Տերը, սպասում է մարթաներին ու մարիամներին՝ մեր հոգու քույրերին՝ մտքին ու ցանկությանը, որպեսզի մեկ անգամ եւս հաստատի. «Եթե հավատաք, կտեսնեք Աստծու Սերը եւ Փառքը»:

Արդ, մեր ամբողջ սրտով երկրպագենք երկնի եւ երկրի ու մեր Արարչին եւ ամենքս բարձրաձայն աղաղակենք առ Նա՝ ասելով. «Հավատում եմ, Տե՛ր, օգնի՛ր իմ անհավատությանը» (Մարկ. 9:23):

*Սարգիս դպիր ՅԱԶԻՉՅԱՆ*
*Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրոցի Գ լսարան*

## ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 15-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի երեք միաբան հայրերի վարդապետական թեզերի պաշտպանությունը:

Քննիչ հանձնախումբը՝ Տ. Շահե արք. Աջեմյանի նախագահությամբ, ծայրագույն վարդապետի աստիճան շնորհեց Տ. Մյուռոն վարդապետ Գըվըրգյանին՝ «Խոսք եւ ներշնչում» թեմայով թեզի համար: Մասնավոր վարդապետի աստիճանի արժանացան Սեւանի Վազգենյան դպրանոցի տեսուչ Տ. Բագրատ աբեղա Գալստյանը՝ «Հիվանդաց օծման խորհրդի խնդիրը Հայ եկեղեցում» եւ Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը՝ «Անառակ որդու առակը մեկնողական գրականության մեջ» թեզերի համար:

Հայ եկեղեցում վարդապետության աստիճան շնորհվում է աստվածաբանական ոլորտում գիտական ուսումնասիրություն կատարած կուսակրոն քահանաներին, որոնց տրվում է քարոզելու, Սբ. Գիրքը եւ եկեղեցու դավանանքը մեկնելու իշխանություն: «Վարդապետ» բառը հենց նշանակում է ուսուցիչ: Վարդապետությունն ունի տասնչորս աստիճան, որոնցից առաջին չորսը մասնավոր վարդապետության աստիճաններ են, իսկ մնացած տասը՝ մեծ կամ ծայրագույն վարդապետության: Վարդապետական աստիճան կարող են շնորհել միայն վարդապետական աստիճան ունեցող եպիսկոպոսները կամ ծայրագույն վարդապետները:

Իսկ մարտի 16-ին Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի ունեցավ ծայրագույն վարդապետական եւ մասնավոր վարդապետական աստիճանների տվչության արարողությունը՝ ձեռամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միջեկեղեցական բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանի եւ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանի:

Ըստ ձեռնադրության «Մաշտոցի» վարդապետական աստիճանի տվչության կարգը սահմանել է Հայ եկեղեցու մեծագույն վարդապետ Սբ. Գրիգոր Տաթեւացին: Եկեղեցական արարողության ընթացքում նորընծա վարդապետներին տրվեցին օձագլուխ գավազաններ իբրեւ վարդապետական աստիճանի եւ իմաստության խորհրդանիշ:

*Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տեղեկատվական համակարգ*

# ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հավատ, հույս, սեր, - քրիստոնեական այս առաքինությունների վրա են խարսխվում քրիստոնյա անհատի գոյակերպը եւ քրիստոնյա հանրության միասնությունը: Այս երեքը միաժամանակ հիմքն են մյուս առաքինությունների, որոնցից Եկեղեցու հայրերը առանձնացնում են յոթը՝ խոնարհությունը, եղբայրասիրությունը, հեզությունը, աշխատասիրությունը, ողորմածությունը, ժուժկալությունն ու ողջախոհությունը: Սրանց հակադրվում են յոթ մոլորությունները՝ հպարտությունը, նախանձը, բարկությունը, ծուլությունը, ագահությունը, որկրամոլությունն ու բղջախոհությունը:

Առաքինությունները մտքի ու սրտի այն հատկություններն են, որոնցով պետք է օժտված լինեն բոլոր մարդիկ՝ Աստծուն մոտենալու եւ նմանվելու համար:

Մարդկային բոլոր առաքինությունները Աստծու հատկանիշների արտացոլումն են եւ, անշուշտ, բնորոշ են ամենից առաջ Աստծու Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Գիտակցում, ընդունում ենք թե ոչ՝ այն ամեն բարին ու գեղեցիկը, որ ներհատուկ են մարդուն, ընծայված են Աստծուց: Հակոբոս առաքյալն ասում է. «Ամեն բարի շնորհ եւ ամեն կատարյալ պարգեւ վերեւից է՝ իջած Լույսի Հորից» (Հակ. 1/17): Ուստի մենք՝ հողեղեններս, եթե ձգտում ենք դեպի կատարյալը, ուրեմն պիտի խորհենք միմիայն այն, «ինչ որ ճշմարտությամբ է, ինչ որ՝ պարկեշտությամբ, ինչ որ՝ արդարությամբ, ինչ որ՝ սրբությամբ, ինչ որ՝ սիրով, ինչ որ՝ բարի համբավով, ինչ որ՝ առաքինությամբ, ինչ որ՝ գովությամբ» (Փիլիպ. 4/2),- այս է խորհուրդ տալիս Պողոս առաքյալը: Չէ՞ որ ինչի մասին, որ խորհում ենք, այն էլ արարում եւ կերտում ենք մեր ներսում՝ մեզ համար աննկատ կերպով: Խորհելով՝ միաժամանակ առիթ ունենք զննելու մեր ներսը եւ իրական գույներանգներով զատորոշելու մեր մեջ բնակվող առաքինին ու մոլին:



«Սիրո մոլորակի» հաջորդ պտույտին կխորհրդածենք յոթ առաքինություններից առաջինի՝ խոնարհության մասին, որը համարվում է մյուս առաքինությունների մայրը եւ ինքնաճանաչման ու ինքնամաքրման առաջին անհրաժեշտ պայմանն է, քանի որ խոնարհ մարդն է ընդունակ արդարամտորեն դատելու ամեն ինչի մասին:

## «ՍԻՐՈ ՄՈԼՈՐԱԿԻ» ՀԱՐՑԸ

### Ինչպե՞ս ես կարողանում ներել քո հանդեպ գործված աններելի արարքը:

**Պատասխանել են Երեւանի թիվ 27 միջն. դպրոցի սաները:**

Իմ հանդեպ աններելի արարք երբեւէ չի գործվել, եւ ես դժվարանում եմ ճշգրիտ պատասխանել այս հարցին: Կարծում եմ՝ կներեմ, եթե այդ արարքը կատարողը զղջա եւ անկեղծորեն ներողություն խնդրի:

*Լիլիթ ԽԱԼԱԹՅԱՆ (14 տ.)*

Իմ հանդեպ աններելի արարքներ քիչ են եղել, եւ եղածն էլ ներել եմ: Ես կարողանում եմ ներել, որովհետեւ կարծում եմ, որ տվյալ մարդը վատ արարք անելիս երկար չի մտածել:

*Սեդրակ ՄԿՐՏՉՅԱՆ (14 տ.)*

Իմ կարծիքով՝ քրիստոնյա մարդու կարեւոր հատկանիշներից մեկը ներելու կարողությունն է:

Ես կարողանում եմ ներել, նաեւ աղոթում ու ներում եմ խնդրում Աստծուց տվյալ մարդու համար:

*Լուիզա ԱՎԱԳՅԱՆ (16 տ.)*

Հիսուսի նկատմամբ աններելի շատ արարքներ գործվեցին, եւ Նա ներեց... Սրանից մենք պետք է հետեւություն անենք:

*Լիլիթ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ (14 տ.)*

Նախքան դպրոցում քրիստոնեական կրթություն ստանալը՝ ես չէի կարողանում ներել իմ հանդեպ գործված աններելի արարքները: Բայց այժմ փորձում եմ տվյալ արարքի պատճառը նախ փնտրել իմ մեջ: Սրա շնորհիվ՝ ինքս գրեթե ոչ ոքի չեմ նեղացնում, ընկերներիս էլ չեմ կորցնում:

*Վերոնիկա ՄԿՐՏՉՅԱՆ (15 տ.)*

## ԾԻԾԱՌՆԱԿ

Արամ Կիրակոսյանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի գեղանկարչության խմբակի սաներից է՝ օր. Արեւիկի աշակերտը: Նկարում է 4 տարեկանից: Շատ է սիրում վառվռուն գույներ՝ կարմիր, կապույտ, կանաչ, դեղին... Դպրոցում սովորում է գերազանց գնահատականներով: Բացի նկարչությունից, շատ է սիրում նաեւ հայկական պարեր եւ, ինչպես իր հասակակիցներից շատերը, համակարգչային խաղեր:

Արամը մեր կյանքում բարության պակասը բացատրում է այսպես. հարուստ լինելու ցանկությունը մարդկանց խանգարում է, որ լավ արարքներ շատ գործեն:



**«Հիսուսի մուտքը Երուսաղեմ»**
**Արամ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (11 տ.)**

## ՀՅՈՒՐԱՍՐԱՀ «ԲՈՒԼԻԿՆԵՐ»

## ՄԱՐՏԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն մեկն էլ կյանքում ժառանգություն է ստանում: Այնպես պատահեց, որ Տարվա չորս եղանակները որոշեցին իրենց թոռնիկներին ժառանգություն թողնել: Ամեն մեկին մի եղանակ՝ մեկ ամսով: Լուրը հասավ Գարուն տատի ավագ թոռնիկ Մարտին:

- Աչքդ լույս, տատդ քեզ ժառանգություն է տալիս: Գնա ստացի՛ր:

Ի՜նչ ուրախություն պատեց Մարտին: Շփոթմունքից գլխարկը չդրեց, վերարկուն չհասցրեց կոճկել, մի ոտքին կիսակոշիկ հագավ, մյուսին՝ երկարաճիտք ու վազեց իր ժառանգությանը տեր կանգնելու:

Մարտը վազում էր անտառի միջով: Հանկարծ նրան հանդիպեց Նապաստակը:

- Խնդրում եմ, Մա՛րտ, սիրուն տղա, թաթս ցավում է, օգնի՛ր հասնեմ դիմացի կոճղին:

Մարտն անգամ չլսեց նրան: Շտապում էր տատիկի մոտ՝ ժառանգություն ստանալու: Մարտը շարունակեց ճանապարհը՝ խելառ-մելառ, ոլորապտույտ վազելով, ճանապարհին խոտ ու ծաղիկ տրորելով:

Արջի քոթոթը խճճվել էր թփի մեջ: Մռթմռթան փոքրիկը Մարտին խնդրեց օգնել իրեն:

- Ժամանակ ես գտել,- կանչեց հեւասպառ Մարտը,- գնում եմ ժառանգություն ստանալու, իսկ դու, թե՝ օգնիր...

Մերժում է օգնել նաեւ ողնուն, որն ուզում էր տանել ծանր բեռը, բայց չէր կարողանում: Մերժում է աջ ու ձախ, որովհետեւ շտապում է տատիկի մոտ: Տատիկն իհարկե այդ ամենը տեսել էր ու ամոթից կարմրել:

Մարտը թակեց դուռն ու ասաց.

- Տատի՛կ, եկել եմ ժառանգությունս ստանալու:

Տատիկը ներս հրավիրեց նրան ու ասաց.



**«Բնանկար»**
**Լուսինե ՂԱԶԱՐՅԱՆ (9 տ.)**

- Փոքրի՛կ Մարտ, ես քեզ միշտ կոչելու եմ գիժ, խենթ ու խելառ, որովհետեւ ճանապարհիդ ավերելով խոտ ու ծիլ, ոչ մեկին չօգնելով՝ եկար հասար ժառանգությանդ տեր կանգնելու: Մի տեսքիդ նայի՛ր: Նման չե՛ս լինելու երկու քույրերիդ՝ Ապրիլին ու Մայիսին: Քեզ պատկանող օրերդ լինելու են խենթ ու խելառ...

Եվ քանի որ Մարտի ուշքն ու միտքը միայն իր ժառանգությունն էր, նա չհասկացավ Գարուն տատի ասածի ողջ իմաստը:

*Արփի ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*Երեւանի Ն. Աղբալյանի անվ. թիվ 19 միջն. դպրոց*

*Էջի պատասխանատու՝ ԱՆՆԱ ԱԼՈՅԱՆ*

